ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ
(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն
Պետական Հատվածի Արդիականացման Երկրորդ Ծրագիր
Վարկ No. 7854-AM

Առաջադրանքի անվանումը՝ **Դասընթացների անցկացման համար տեղական դասախոսների հիմնական խմբի վերապատրաստում և քաղաքականության վերլուծության, մոնիթորինգի, գնահատման և կառավարման մեթոդների 7 ուսումնական մոդուլների, ինչպես նաև Կառավարչական անհատական հմտությունների ուսումնական ձեռնարկի մշակում**

Հղում No. (համաձայն Գնումների Պլանի): PSMP2- C- 3.2.3.1

Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախաձեռնել է պետական հատվածի բարեփոխումների լայն գործընթաց, որի աջակցությանն է ուղղված Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող Պետական հատվածի արդիականացման երկրորդ ծրագիրը (ՊՀԱԾ 2):

Սույն առաջադրանքի նպատակն է պետական հատվածում մարդկային ռեսուրսների կառավարման բնագավառում հեռավար ուսուցման մոդուլների՝ փորձնական ուսումնական ծրագրերի, դրանց հարակից ուսումնական ձեռնարկների մշակումը, ուսուցման և դրանց իրականացման գործընթացների ապահովումը:

Նշված խնդիրների լուծմանը հասնելու համար անհրաժեշտ է հայաստանյան և միջազգային փորձի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում մշակել հետևյալ ուսումնական մոդուլները՝

«Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ և գնահատում»,

«Կատարողականի կառավարում, ներառյալ կազմակերպական փոփոխությունների կառավարում»,

«Մարդկային ռեսուրսների կառավարում»,

«Մասնագիտական բարեխղճությունը և էթիկան պետական կառավարման ոլորտում»,

«Ծառայությունների մատուցում և կառավարում»,

«Ծրագրերի կառավարում»,

«Տարածքային զարգացման ծրագրերի մշակման և կառավարման կարողությունների զարգացում»,

ինչպես նաև «Կառավարչական անհատական հմտությունների ուսումնական ձեռնարկ»:

Անհրաժեշտ է նաև սահմանել նշված աշխատանքների մշակման և իրականացման չափորոշիչները, մեթոդները, տեխնոլոգիաները, մշակել և պատրաստել այդ հարցերով մեթոդական ձեռնարկ-ուղեցույց, ինչպես նաև անցկացնել այդ հարցերով պատասխանատու քաղաքացիական ծառայողների և վերապատրաստողների վերապատրաստում:

Առաջադրանքի կատարման ժամանակահատվածը կազմում է մոտավորապես 9 ամիս:

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը և ՀՀ ֆինանսների նախարարության Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն ՊՀ-ն (ԱՖԾԿԿ) հրավիրում են խորհրդատվական ընկերություններին (Խորհրդատուներ) Ծառայության մատուցման վերաբերյալ արտահայտելու իրենց հետաքրքրությունը: Հետաքրքրված Խորհրդատուները պետք է տրամադրեն տեղեկություններ, որոնք կհաստատեն, որ նրանք ունեն Ծառայություններն իրականացնելու համար պահանջվող որակավորումը և համապատասխան փորձառությունը:

Ավելի կոնկրետ, Հետաքրքրվածության հայտը պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունը.

Հիմնական բիզնեսի եւ գործունեության տարիների մանրամասն նկարագիրը՝ ներառյալ մատուցված ծառայությունները, ավարտված ծրագրերը, հասցեները, կոնտակտային տվյալները և ընկերության հիմնական աշխատակազմի կենսագրությունները և այլն:

Կարճ ցուցակում ներգրավման (shortlisting) չափանիշներն են.

- Գործունեության հիմնական տեսակը և տվյալ գործունեության մեջ ներգրավված լինելու տարիների քանակը
- Առաջադրանքի ոլորտում ունեցած որակավորումը
- Խորհրդատվական փորձը ԵԿԱ տարածաշրջանում:
- Խորհրդատվական ընկերությունը պետք է ներառի պետական կառավարման ուսուցման որևէ առաջատար միջազգային կենտրոն (ՔԾ ուսումնական հաստատություն, համալսարանի ստորաբաժանում/կենտրոն),

Հետաքրքրված խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է Համաշխարհային բանկի՝ «ՎԶՄԲ փոխատվությունների և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրության և վարձման Ուղեցույցների» (2004 թ-ի մայիս, խմբագրված՝ 2006 թ-ի հոկտեմբերի 1-ին և 2010 թ-ի մայիսի 1-ին) («Խորհրդատուի ուղեցույց») 1.9 պարագրաֆին, որտեղ սահմանված է շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային բանկի քաղաքականությանը:

Իրենց որակավորումը բարձրացնելու համար Խորհրդատուները կարող են համագործակցել այլ ընկերությունների հետ՝ համատեղ կամ ենթախորհրդատվությամբ:

Խորհրդատվական ընկերության ընտրությունը կիրականացվի «Ուղեցույցներ. ՎԶՄԲ փոխատվությունների և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի վարկառուների կողմից խորհրդատուների ընտրության և վարձում» փաստաթղթում (2004 թ-ի մայիս, խմբագրված՝ 2006 թ-ի հոկտեմբերի 1-ին և 2010 թ-ի մայիսի 1-ին) սահմանված «Խորհրդատուների որակավորում ընտրության» մեթոդի ընթացակարգերի համաձայն:

Հետաքրքրված թեկնածուները կարող են լրացուցիչ տեղեկատվություն ստանալ ներքոնշյալ հասցեով հետևյալ աշխատանքային ժամերին՝ 09:00-ից մինչ 18:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է գրավոր ձևով ներկայացվեն ներքոնշյալ հասցեով (անձամբ, փոստով կամ էլ-հասցեով) մինչև **2014թ. դեկտեմբերի 19-ը, ժ. 18:00** (տեղական ժամանակով):

պրն. Էդգար Ավետյան
Գործադիր տնօրեն
Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն
Հասցե՝ Տիգրան Մեծ 4, 3-րդ հարկ,
Երևան, Հայաստանի Հանրապետություն
Հեռ՝ (374-11) 91 05 81, (374-10) 52 34 71
Ֆաքս՝ (374-10) 54 57 08
Էլ-փոստ՝ info@ffpmc.am